

Կարծիք

«ազդարարման համակարգի մասին» օրենքում լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ

2025 թվականի դեկտեմբերի 16-ին Արդարադատության նախարարության կողմից Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում հրապարակվել է «Ազդարարման համակարգի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի [նախագիծը](#) (այսուհետ՝ Նախագիծ): Նշված նախագիծը առաջարկվում են մի շարք փոփոխություններ, որոնց վերաբերյալ ստորև ներկայացնում ենք մեր դիտարկումներն ու առաջարկությունները:

- Նախագծի 1-ին հոդվածում** առաջարկվում է «Ազդարարման համակարգի մասին» օրենքի 1-ին հոդվածում «կազմակերպությունների» բառը փոխարինել «պետական հիմնարկների և կազմակերպությունների, հանրային նշանակության կազմակերպությունների և 250 և ավելի աշխատակից ունեցող մասնավոր ոլորտի կազմակերպությունների» բառերով: Փաստորեն, նախատեսվում է ազդարարման պահանջները տարածել միայն 250 և ավելի աշխատակից ունեցող (այսինքն՝ միայն խոշոր) կազմակերպությունների վրա, մինչդեռ միջազգային ստանդարտների համաձայն պարտադիր է առնվազն 50 և ավելի աշխատող ունեցող կազմակերպություններում ունենալ ներքին ազդարարման գործող մեխանիզմներ և ազդարարման հարցերով պատասխանատու անձ կամ առանձին միավոր:¹ Հաշվի առնելով, որ Հայաստանում ներկա պահին նույնիսկ խոշոր կազմակերպությունների պարագայում խնդրահարույց է ազդարարման համակարգերի լիարժեք գործարկումը և դրա նկատմամբ պետական հսկողությունը, թերևս կարելի է առաջնորդվել մասնավոր հատվածին վերաբերելի պահանջները փուլային մոտեցմամբ ներդնելու մոտեցմամբ՝ ապագայում համակարգը կայացնելու և ազդարարման մեխանիզմների շրջանակն ընդլայնելու ու մշակույթը տարածելու ակնկալիքով:

Միաժամանակ, տրամաբանական է ակնկալել, որ մասնավոր հատվածն առաջնորդվի իր ոլորտի համար սահմանված բարեվարքության պահանջներով: 2024 թվականի հուլիսի 30-ին ՀՀ Էկոնոմիկայի նախարարի թիվ 1955-Ն հրամանով ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագիրքը», ի թիվս բարեվարքության խրախուսման այլ հարցերի, նախատեսվել են նաև ազդարարման քաղաքականություն, ընթացակարգեր ու կառուցակարգեր ունենալու վերաբերյալ կարգավորումներ, հաշվետվողականություն: Սակայն պետք է նշել, որ այս կանոնագիրքը մասնավոր ձեռնարկությունների համար չունի պարտադիր բնույթ, իսկ պետությունը որևէ կերպ չի խթանում, որպեսզի կազմակերպություններն իրենց գործունեությունը կազմակերպեն տվյալ կանոնագրքով սահմանված սկզբունքներով ու կանոններով: Պետության կողմից որոշակի խրախուսական միջոցների սահմանումը առանցքային դեր ունի մասնավոր կազմակերպությունների կողմից կանոնագրքով սահմանված կանոնների, այդ թվում՝ ազդարարման մեխանիզմների ներդրման առումով, ընդ որում՝ ոչ

¹ Transparency International, Assessing Whistleblowing Legislation, Methodology and guidelines for assessment against the EU Directive and best practice, 2020, https://images.transparencycdn.org/images/2020_Toolkit_AssessingWhistleblowingLegislation_EN.pdf; Transparency International, A Best Practice Guide for Whistleblowing Legislation, <https://www.transparency.org/en/publications/best-practice-guide-for-whistleblowing-legislation>

իմպերատիվ, այլ կամավոր եղանակով, ինչը համապատասխանաբար կամրապնդի մասնավոր հատվածի, ինչպես նաև մասնավոր-պետություն հարաբերությունների բարեվարքությունը և կրեթի մշակույթի փոփոխության:

Առաջարկ

- Պետություն-բիզնես հարաբերությունները (առնվազն՝ հանրային գնումները կամ այլ պայմանագրային հարաբերությունները) կարգավորող օրենքներում նախատեսել «Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագիրք» ընդունելու և դրա համապատասխան գործելու պարտադիր պահանջ:
2. **Նախագծի 2-րդ հոդվածում** առաջարկվում է «Ազդարարման համակարգի մասին» օրենքի 2-րդ հոդվածում փոփոխության ենթարկել «ազդարար» հասկացությունը, սահմանելով՝ «ազդարար՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը սույն օրենքով նախատեսված կարգով բարեխղճորեն հաղորդում է տեղեկություններ կոռուպցիոն բնույթի դեպքի կամ փողերի լվացման կամ ահաբեկչական գործունեության ֆինանսավորման կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ՝ կապված այն պաշտոնատար անձի, մարմնի, կազմակերպության կամ կազմակերպության աշխատակցի հետ, որոնց հետ նա գտնվում կամ գտնվել է աշխատանքային կամ քաղաքացիաիրավական կամ վարչաիրավական կամ այլ հարաբերությունների մեջ, կամ որին դիմել է ծառայությունների մատուցման նպատակով, կամ որը սխալմամբ ընկալվել է որպես ազդարար: Անձը համարվում է սխալմամբ ընկալվող ազդարար, եթե նա չազդարարելով ընկալվել է որպես ազդարար այլ անձանց կողմից, կամ որի հանդեպ կիրառվել են վնասակար գործողություններ»: «Այլ հարաբերությունների մեջ» գտնվելու ձևակերպումը անորոշ է և հնարավորություն է տալիս երկակի մեկնաբանության: Ազդարարումը ստացող մարմիններին տալիս է լայն հայեցողություն, իսկ ազդարարներին՝ որոշակիության պակաս, թե արդյոք նրանց վրա կտարածվի պաշտպանությունը, թե՛ ոչ, ինչը հատկապես, խնդրահարույց կարող է լինել պայմանագրային հարաբերություններից դուրս գտնվող ազդարարման համար, օրինակ՝ թափուր հաստիքների, գնումների, աճուրդների, մրցույթների մասնակիցների, բիզնես գործընկերների կողմից: Այս մոտեցումը նաև նախատեսվում է Եվրոպական Միության դիրեկտիվով:²

Առաջարկ

- Հաշվի առնելով «այլ հարաբերությունների մեջ» գտնվելու եզրույթի տարընթերցման հնարավորությունը՝ կամ օրենքում հստակեցնել նշված հասկացությունը, կամ հնարավորինս սեղմ ժամկետում մշակել և կիրառել ազդարարման վերաբերյալ հստակ և մատչելի ուղեցույցներ, որը կուղեկցվի ազդարարման հարցերով պատասխանատուների համապատասխան վերապատրաստմամբ:
3. **Նախագծի 2-րդ հոդվածում** առաջարկվում է որպես «արտաքին ազդարարում» սահմանել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով ազդարարումը, իսկ 6-րդ հոդվածը հստակեցնում է, որ «Արտաքին ազդարարումը սկսվում է ազդարարի կողմից Հայաստանի

² EU, Directive 2019/1937 of the European Parliament and of the Council of 23 October 2019 on the protection of persons who report breaches of Union law" (Whistleblower Protection Directive), <https://eur-lex.europa.eu/legalcontent/EN/TXT/?uri=celex%3A32019L1937>

Հանրապետության գլխավոր դատախազություն միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով տվյալներ ներկայացնելու կամ անանուն եղանակով ազդարարմամբ»: Ի հակադրություն, ներկայում գործող օրենքով արտաքին ազդարարումը սկսվում է ազդարարի կողմից իրավասու մարմին հաղորդում ներկայացնելով, ընդ որում՝ միաժամանակ, նախաքննություն իրականացնող մարմինների կողմից հանցագործության վերաբերյալ հաղորդումների քննարկման և լուծման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ընթացակարգը չի համարվում արտաքին ազդարարում: Վերը ներկայացված փոփոխությունը հնարավոր է առաջարկվում է ազդարարումը իրավապահ մարմիններին ներկայացվող հաղորդումներից տարանջատելու և դրան առնչվող վիճակագրությունը հստակեցնելու նպատակով: Այդուհանդերձ, սա սահմանափակ լուծում է: Իրականում իրավապահ մարմիններին ներկայացվող հանցագործության մասին հաղորդումների զգալի մասն իրենց բնույթով հանդիսանում են «ազդարարում»: Հաղորդում ներկայացնողները կարող են պարզապես չիմանալ ազդարարման մեխանիզմների կամ իրենց համար որպես ազդարար նախատեսված պաշտպանության միջոցների, հաղորդումների տարբերակումների մասին: Արդյունքում, փաստորեն, նրանց հաղորդումները չեն դիտարկվի որպես «ազդարարում» «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի լույսի ներքո, և նրանց համար հասանելի չեն լինի ազդարարների համար օրենքով նախատեսված պաշտպանության միջոցները: Բացի այդ, այս դեպքում անձը նաև կարող է քրեական պատասխանատվություն կրել սուտ մատնության համար: Նաև բաց է մնում այն հարցը, թե իրավապահ մարմիններն ինչ հիմքով և տրամաբանությամբ պետք է տարբերակեն և տարբեր ընթացակարգերով վարեն այն գործերը, երբ անձը միաժամանակ կիրառում է հաղորդման/ազդարարման մի քանի խողովակ: Այս առումով կարիք կա լրացուցիչ ուսումնասիրելու միջազգային պրակտիկան, այն երկրների փորձը, որոնք կարողացել են լուծել խաչվող վիճակագրության հետ կապված հարցերը:

Առաջարկ

- Ուժը կորցրած ճանաչել «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի այն դրույթը, ըստ որի արտաքին ազդարարում չի համարվում նախաքննություն իրականացնող մարմինների կողմից հանցագործության վերաբերյալ հաղորդումների քննարկման և լուծման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ընթացակարգը: Փոխարենը՝ սահմանել, որ ցանկացած իրավապահ մարմին ներկայացված հանցագործության մասին հաղորդումները դիտարկվեն «Ազդարարման համակարգի մասին» օրենքի լույսի ներքո և սահմանմանը բավարարելու դեպքում համարվեն «ազդարարում», ներառվեն վիճակագրական տվյալների մեջ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հաղորդում տված անձինք հնարավորություն ունենան օգտվել նաև ազդարարների համար «Ազդարարման համակարգի մասին» օրենքով նախատեսված իրավունքներից և երաշխիքներից:
 - Վիճակագրությունը վարել առանձին՝ ազդարարման միասնական հարթակի միջոցով ներկայացված հաղորդում/ազդարարումների և իրավապահ մարմիններին ներկայացված հաղորդում/ազդարարումների վերաբերյալ՝ վերջինում համապատասխանաբար տարանջատելով տարբեր մարմիններին առնչվող տվյալները:
4. **Նախագծի 2-րդ հոդվածում** «ազդարար» և «ազդարարում» հասկացությունների ներքո ավելացված է «փողերի լվացման կամ ահաբեկչական գործունեության ֆինանսավորման» դեպքերի մասին հաղորդում ներկայացնելը: Փողերի լվացումն՝ ըստ ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի պահանջների ճանաչվում է կոռուպցիոն բնույթի

դեպք, և միաժամանակ ներառված է քրեական օրենսգրքի հավելված 1-ում կոռուպցիոն հանցանքների ցանկում, ուստի դրա առանձին նշումը հիմնավորված չէ:

Առաջարկ

- Օրենքի նախագծի «ազդարար» և «ազդարարում» հասկացություններից դուրս բերել «փողերի լվացում» եզրույթը:

5. **Նախագծով գործող օրենքի 7-րդ հոդվածում** կատարված փոփոխությունների արդյունքում ՀՀ գլխավոր դատախազության միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով տվյալներ ներկայացնելու կամ անանուն եղանակով ազդարարումն այսուհետ իրականացվելու է ոչ միայն կոռուպցիոն հանցագործությունների մասով, այլև 2-րդ հոդվածի «ազդարարում» հասկացությամբ սահմանված՝ «կոռուպցիոն բնույթի դեպքի, փողերի լվացման կամ ահաբեկչական գործունեության ֆինանսավորման կամ շահերի բախման կամ վարձագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ տեղեկությունների գրավոր կամ բանավոր» հաղորդումների մասով: Տվյալ փոփոխությունը կարևոր հնարավորություն է տալիս խթանել արտաքին ազդարարումը և բարելավելությունը պետական ու տեղական մարմիններում, մասնավոր հատվածում: Հաշվի առնելով տեղեկատվական տեխնոլոգիաների և հաղորդումների ներկայացման, այդ թվում՝ թեժ գծերով, մամուլում հրապարակումներով, անանուն հաղորդումների էլեկտրոնային հարթակով և այլ հաղորդակցման միջոցներով տեղեկատվության փոխանցման, ինչպես նաև վարչական գործընթացների թվայնացման հնարավորությունները, այս համակարգը կարող է նաև աջակցել ներքին ազդարարմանը՝ առնվազն պետական ու տեղական հաստատությունների ներսում բյուրոկրատական քաշքշուկը նվազեցնելու և ազդարարների անվտանգությունը ապահովելու նպատակով:

Առաջարկ

- Ազդարարման հարթակում արտաքին ազդարարմանը զուգահեռ ներկառուցել ներքին ազդարարման ենթաբաղադրիչ/մոդուլ պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների կողմից ներքին ազդարարումները գրանցելու համար:

6. **Նախագծի 4-րդ հոդվածում** առաջարկվող փոփոխությունների արդյունքում նախատեսվում է, որ պետական և ՏԻ մարմինները, ինչպես նաև մասնավոր ոլորտի կազմակերպությունները ստեղծում են ներքին ազդարարման ընթացակարգեր, որոնք պետք է համապատասխանեն ՀՀ կառավարության կողմից սահմանված ազդարարումների հաշվառման, ձևակերպման օրինակելի ձևին, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգին: Այս մոտեցումը կարող է հանգեցնել առանձին մարմիններում ազդարարի կողմից հաղորդումների ներկայացման տարատեսակ կարգավորումների, քանի որ ՀՀ կառավարության կողմից սահմանված ազդարարման ընթացակարգը չի վերաբերում ազդարարման գործընթացի կազմակերպմանը, այլ հիմնականում կարգավորում է վիճակագրության վարումը:

Առաջարկ

- Օրենքի նախագծի 4-րդ հոդվածում փոփոխությունների ու լրացման միջոցով սահմանել, որ ներքին ազդարարման ընթացակարգը սահմանվում է ՀՀ կառավարության լիազոր մարմնի կողմից:
- Անցումային դրույթներով ՀՀ կառավարության համար սահմանել հստակ և սեղմ ժամկետներ համապատասխան որոշման ընդունման և ընթացակարգի սահմանման համար:

7. **Նախագծի 5-րդ հոդվածում** առաջարկվում է փոփոխել ներքին ազդարարման սկսման գործընթացը, այն սկսելով ոչ թե անմիջական ղեկավարին ազդարարման փուլից, այլ «նրա վերադասին կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձի կամ իրավասու մարմնի ղեկավարի լիազորած անձին» ազդարարմամբ: Բացի այդ, օրենքի նախագծով նախատեսվում է, որ վերջիվերջո «ազդարարի անմիջական ղեկավարի վերադասը կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձը, ազդարարումը ստանալուց հետո պարտավոր է այն անհապաղ փոխանցել իրավասու մարմնի ղեկավարին կամ նրա լիազորած անձին»: Հաղորդակցության նման աստիճանավորումն ու բարդացումը խնդրահարույց է, հատկապես, որ վերջնական որոշումն, ի վերջո, պետք է կայացվի իրավասու մարմնի ղեկավարի կամ նրա լիազորած անձի կողմից: Նման մոտեցումը բյուրոկրատական ավելորդ քաշքշուկների ռիսկեր է պարունակում, ինչը ներկայիս ազդարարման պասիվ պրակտիկայի պարագայում կարող է լրացուցիչ դեմոտիվացնող գործոն դառնալ պոտենցիալ ազդարարողների համար:

Առաջարկ

- Օրենքի նախագծի 5-րդ հոդվածը ձևակերպել այնպես, որ ներքին ազդարարման գործընթացը սկսվի ու ավարտվի համապատասխան մարմնի ղեկավարին կամ նրա լիազոր անձին հաղորդում ներկայացնելու ճանապարհով:

8. **Նախագծով** մի շարք գործառույթներ փաստացի տեղափոխվում են Մարդու իրավունքների պաշտպանին (ՄԻՊ), սակայն ՄԻՊ գրասենյակը մի կողմից չունի գործադիր իշխանության լիազորություններ, մյուս կողմից՝ բավարար կարողություններ ու ռեսուրսներ՝ պետական և մասնավոր հատվածների ներսում ազդարարման համակարգի ներդրման, վերահսկման և համակարգային խնդիրների լուծման ուղղությամբ: Արդյունքում կարող է ձևավորվել իրավիճակ, երբ օրենքով ամրագրված մեխանիզմները մնան «թղթի վրա», ազդարարները՝ անպաշտպան, իսկ ՄԻՊ-ը բացառապես իրականացնի վիճակագրությունների վարման և դրանք տարեկան հաղորդումներում հրապարակելու լիազորություններ: ՄԻՊ-ին ազդարարների պաշտպանության առանձին գործառույթներով լիազոր մարմին դարձնելը նաև որոշ առումով հակասում է օմբուդսմենտական ինստիտուտի տրամաբանությանը՝ առնվազն ներկա կարգավորումների լույսի ներքո:

Առաջարկ

- Իրականացնել ՄԻՊ աշխատակազմի անհրաժեշտ համալրում ազդարարման հարցերով մասնագիտացված և վերապատրաստված աշխատակիցներով, որոնք հնարավորինս կկատարեն սահմանված լիազորությունների իրականացումը, այս առումով նաև նախատեսելով բյուջետային միջոցներ:
- Եթե ՄԻՊ-ին վերապահվում են առանձին պաշտպանական գործառույթներ, ապա դրանք տարանջատել համակարգման ու քաղաքականության իրականացման գործառույթներից՝ չստեղծելով անհարկի ակնկալիքներ:

- Նաև ՄԻՊ-ին ազդարարման ոլորտի պաշտպանական, վերահսկողական, համակարգման լիազորություններով օժտելու հարցը կամ ազդարարման իրավասու մարմնի հարցը քննարկել ոչ միայն «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի, այլև ՀՀ Սահմանադրության փոփոխությունների համատեքստում:

Ի լրումն վերոնշյալի ներկայացվում են հետևյալ առաջարկները նախագծում ներառելու համար.

9. **Գործող օրենքի 13-րդ հոդվածով** նախատեսված է «բարեխղճության» չափանիշ, որը ներառում է ազդարարի կողմից նախօրոք «ստուգման քայլերի» պարտականություն, ինչպես նաև «առավելություն պահանջելու/ստանալու» հիմքով պաշտպանության դադարեցման հնարավորություն: Նախագծով, թեև առաջարկվում է «բարեխղճության» սահմանման պարզեցում, առկա են ռիսկեր, որ կիրառման փուլում որևէ մարմին ըստ իր սահմանած ընթացակարգերի ու ներքին ակտերի կարող է վերականգնել «ստուգման պարտականությունը»: Ի լրումն, շարունակում է «անբարեխղճության» հիմք համարվել տվյալ հոդվածում նշված հատկանիշների բացակայությունը, սակայն հասկանալի չէ, թե ինչպես է պարզ դառնալու, որ ազդարարը չունի կասկածի ողջամիտ հիմք կամ տեղեկության ճշմարտացի լինելու վերաբերյալ համոզմունք: Բացի այդ, տվյալ հոդվածի համաձայն «անբարեխղճ» է համարվում այն ազդարարը, որն իր կամ այլ անձի համար պահանջում կամ ստանում է որևէ առավելություն, միևնույն ժամանակ ազդարարում, օրինակ, կարող է վերաբերել գնումների ընթացակարգերի խախտմանը կամ հանցագործ պայմանավորվածությանը, որի բացակայության պարագայում ազդարարը կարող էր ստանալ մրցակցային առավելություն: Այս բացերը կարող են չարաշահվել՝ զրկելով ազդարարներին պաշտպանության միջոցներից և խոցելի դարձնելով նրանց հաշվեհարդարի նկատմամբ:

Առաջարկ

- Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը հանել:

10. **Գործող օրենքի 9.2-րդ հոդվածի** համաձայն՝ ազդարարը կարող է դիմել հանրությանը միայն այն դեպքում, երբ մյուս ազդարարման տեսակներով հաղորդումը օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ընթացք չի ստացել:

Տվյալ պահանջը որևէ հիմնավորում չունի, քանի որ ազդարարը որևէ վստահություն չունենալով պետական մարմինների նկատմամբ իրավունք ունի նախընտրել հանրային ազդարարման եղանակը: Այս կարգավորումը կարող է ազդարարներին ստիպել առհասարակ ձեռնպահ մնալ ազդարարումից, կամ ընտրել ոչ ֆորմալ ուղիներ՝ այդպիսով զրկվելով օրենքով նախատեսված պաշտպանության միջոցներից: Բացի այդ, նման սահմանափակումը որոշ իրավիճակներում կարող է նաև հակասել օրենքի նպատակներին՝ կանխարգելել վնասը և ապահովել հանրային շահի պաշտպանությունը:

Առաջարկ

- Օրենքի 9.2-րդ հոդվածում կատարել փոփոխություն՝ վերացնելով հանրության ազդարարման համար արտաքին կամ ներքին ազդարարումների շեմը սպառնելու պայմանը:

11. **Գործող օրենքը** նախատեսում է 1-2 աշխատանքային օր ժամկետ իրավասու մարմինների կողմից ազդարարումը հաշվառելու և 3 աշխատանքային օր՝ հիմքերի

առկայության դեպքում վարույթ հարուցելու համար: Նաև նախատեսված է ժամկետ վարույթի արդյունքների վերաբերյալ ազդարարին 3-օրյա ժամկետում ծանուցելու համար: Հետագա հաղորդակցություն ազդարարի հետ նախատեսված չէ և որևէ մարմին պարտականություն չունի հետամուտ լինելու ազդարարման առարկային առնչվող զարգացումներին, ազդարարի հետագա ճակատագրին, հնարավոր խոչընդոտներին կամ հաշվեհարդարի ռիսկերին:

Առաջարկ

- Հստակ պարտականություն և ընթացակարգեր սահմանել իրավասու մարմինների, այդ թվում՝ ՄԻՊ-ի համար ազդարարման վերաբերյալ տեղեկությունները ստանալուց հետո որոշ ժամկետներում ազդարարի հետ հետադարձ կապ պահելու վերաբերյալ:

Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն

Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ

Հելսինկյան բաղաբացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ